ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 3
« ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՀԲՄԾՁԲ-7/4» ԾԱԾԿԱԳՐՈՎ
ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ

ք. Երևան 27-ը ապրիլի 2018թ.
ժամը 11^{00}

Մասնակցում էին՝
Գնահատողներ՝
ՀՀ ՊՆ ՆՏԱԴ թիկունքային ապահովման վարչության պետ, գնդապետ Վ. Գասպարյան,
ՀՀ ԶՈՒ թիկունքի վարչության պարենային ծառայության պետ, գնդապետ Ա. Մարգարյան,
ՀՀ ՊՆ ՆՏԱԴ ՌԱ վարչության պարենային, դեղամիջոցներով և բժշկական սարքավորումներով ապահովման բաժնի պետ, ՔՀԾ 1-ին դասի խորհրդական Տ. Հարոյան,
ՀՀ ՊՆ ռազմական ոստիկանության հատուկ օպերատիվ ծառայության սպա, լեյտենանտ Ս. Նիկոլյան,
ՀՀ ՊՆ իրավաբանական վարչության իրավական ապահովման բաժնի ավագ սպա, փոխգնդապետ Ա. Մաղաքյան:
Գնումները համակարգող՝
ՀՀ պաշտպանության նախարարության նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտի գնումների փաստաթղթերի ձևակերպման վարչության նյութատեխնիկական միջոցների գնման փաստաթղթերի ձևակերպման բաժնի գլխավոր մասնագետ, ՔՀԾ 2-րդ դասի խորհրդական Գ. Տերյան:

« ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՀԲՄԾՁԲ-7/4» ծածկագրով հրապարակ բաց մրցույթի հանձնաժողովի նիստի օրակարգը հաստատելու մասին.

(Գ.Տերյան)

1. Տեղեկություններ www.armeps.am կայքում էլեկտրոնային հայտեր ներկայացրած մասնակիցների մասին.
2.«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՀԲՄԾՁԲ-7/4» ծածկագրով ընթացակարգի էլեկտրոնային հայտերը կազմելու և ներկայացնելու՝ ընթացակարգի հրավերի պահանջներին համապատասխանության մասին, տվյալներ բացված յուրաքանչյուր հայտերում պահանջվող փաստաթղթերի առկայության մասին, տվյալներ յուրաքանչյուր մասնակցի ներկայացրած փաստաթղթերի՝ սահմանված պայմաններին համապատասխան կազմած լինելու մասին.
3. Յուրաքանչյուր մասնակցի առաջարկած գինը և տեղեկատվություն բանակցությունների վարման մասին.
4 Ներկայացված գնային առաջարկների հիման վրա «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՀԲՄԾՁԲ-7/4» ծածկագրով ընթացակարգի 1-ին և այլ տեղեր զբաղեցրած մասնակիցների որոշման մասին.
5. Տեղեկություններ՝ հայտերի վերաբերյալ հարցումների և պատասխանների մասին.
6. Հանձնաժողովի հաջորդ նիստի անկացման օրը, ժամը և վայրը որոշելու մասին.

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ՝ 0:

1. Տեղեկություններ www.armeps.am կայքում էլեկտրոնային հայտ ներկայացրած մասնակիցների մասին.

(Գ.Տերյան)

1.1 ՀՀ ՊՆ կարիքների համար «հացաթխման ծառայության» ձեռքբերման նպատակով կազմակերպված «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՀԲՄԾՁԲ-7/4» ծածկագրով ընթացակարգին սահմանված ժամկետում էլեկտրոնային հայտեր են ներկայացրել հետևյալ մասնակիցները.

Հ/հ	Մասնակցի անվանում
1	«ԱՆՆԱ ԴԻԱՆԱ» ՍՊԸ
2	«Էջմիածնի հաց» ԲԲԸ
3	«ՍՖՍ ԱՐԽՈ» ՍՊԸ

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ՝ 0:

Ծանոթություն՝ www.armeps.am կայքի ծրագրային փոփոխությունների հետևանքով ընթացակարգը հրապարակվել է 10.04.2018թ.:

2 .« ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՀԲՄԾՁԲ-7/4» ծածկագրով ընթացակարգի էլեկտրոնային հայտերը կազմելու և ներկայացնելու՝ ընթացակարգի հրավերի պահանջներին համապատասխանության մասին, տվյալներ բացված յուրաքանչյուր հայտերում պահանջվող փաստաթղթերի առկայության մասին, տվյալներ յուրաքանչյուր մասնակցի ներկայացրած փաստաթղթերի՝ սահմանված պայմաններին համապատասխան կազմած լինելու մասին.

(Գ.Տերյան)

2.1 Մասնակիցների էլեկտրոնային հայտերը www.armeps.am կայքի կողմից համարվել է հետագա գնահատման համար ընդունելի:
2.2 Մասնակիցների էլեկտրոնային հայտերում հրավերով պահանջվող /նախատեսված/ փաստաթղթերն առկա են:
2.3 Մասնակիցների հայտերով ներկայացրած փաստաթղթերը համապատասխանում են « ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՀԲՄԾՁԲ-7/4» ծածկագրով ընթացակարգի հրավերով սահմանված պայմաններին (պահանջներին), բացառությամբ «ԱՆՆԱ ԴԻԱՆԱ» ՍՊԸ, որտեղ մասնակիցը 2-րդ չափաբաժնի գնային առաջարկը ներկայացրել է չափաբաժնի համար նախատեսված բացվածքով: Հաշվի առնելով, որ վերոնշյալ չափաբաժնի մասով հայտ է ներկայացրել միայն «ԱՆՆԱ ԴԻԱՆԱ» ՍՊԸ, ուստի գնահատող հանձնաժողովի կողմից հայտերի գնահատման նիստը կասեցվել է և 04.05.2018թ. ելք ԴԿԱ/1545 գրությամբ դիմվել է լիազորված մարմնին վերոնշյալ մասնակցի գնային առաջարկը ուսումնասիրելու և կարծիք տալու մասնակցի հայտը դրական գնահատելու վերաբերյալ: 15.05.2018թ. ստացված ՀՀ ֆինանսների տեղակալի 11.05.2018թ. 03/27-1/8573-18 գրության համաձայն հայտերի հրավերի պահանջներին համապատասխանության գնահատումը վերապահված է գնահատող հանձնաժողովին: Ելնելով վերոգրյալից և հաշվի առնելով, որ այդ չափաբաժնի մասով հայտ է ներկայացրել միայն մեկ մասնակից, ինչպես նաև ապահովման խիստ անհրաժեշտությունը գնահատող հանձնաժողովը որոշեց «ԱՆՆԱ ԴԻԱՆԱ» ՍՊՐ հայտը գնահատել համապատասխան հրավերի պահանջներին:
Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ՝ 0:

3. Յուրաքանչյուր մասնակցի առաջարկած գինը և տեղեկատվություն բանակցությունների վարման մասին

(Գ Տերյան)

3.1 «Գնումների մասին» ՀՀ օրենքի և ընթացակարգի հրավերի պահանջներին համապատասխանող գնային առաջարկ են ներկայացրել 3 մասնակիցներ.

ՀՀ	Ծառայության անվանումը և տարածաշրջանը	Չ/Մ	Քանակը	Նախահաշվային գումարը	1-ին տեղ զբաղեցնող կազմակերպության			Մրցույթին մասնակցող այլ կազմակերպությունների		
					անվանումը	գինը		անվանումները	Գումար	
						առանց ԱԱՀ	ԱԱՀ-ով		առանց ԱԱՀ	ԱԱՀ-ով
1	Հացաթխման ծառայություն Մեղրիի տարածաշրջան	կգ	165000	20295000	<<ՍՖՍ Արխո>> ՍՊԸ	21450000				
2	Հացաթխման ծառայություն Գորիսի տարածաշրջան	կգ	260000	28600000	<<Աննա Դիանա>> ՍՊԸ	28600000				
3	Հացաթխման ծառայություն Արմավիրի տարածաշրջան	կգ	380000	30780000	<<Էջմիածնի հաց>> ԲԲԸ	26375000	31650000			

3.2 Մասնակիցների գնային առաջարկների հաշվարկման ճշտությունը /հայտերով ներկայացված գնային առաջարկի թվերով և տառերով արտահայտված տվյալների համապատասխանությունը/, ինչպես նաև հաշվարկման թվաբանական ճշտությունները համապատասխանում են /ճիշտ են/, բացառությամբ «ԱՆՆԱ ԴԻԱՆԱ» ՍՊԸ, որտեղ մասնակիցը 2-րդ չափաբաժնի գնային առաջարկը ներկայացրել է չափաբաժնի համար նախատեսված բացվածքով, ինչի վերաբերյալ 04.05.2018թ. ելք ԴՎԱ/1545 գրությամբ դիմվել է ՀՀ ֆինանսների նախարարություն եզրակացության վերաբերյալ: Հաշվի առնելով, որ այդ չափաբաժնի մասով հայտ է ներկայացրել միայն մեկ մասնակից, ինչպես նաև ապահովման խիստ անհրաժեշտությունը գնահատող հանձնաժողովը որոշեց «ԱՆՆԱ ԴԻԱՆԱ» ՍՊԸ գնային առաջարկը գնահատել համապատասխան հրավերի պահանջներին:

3.3 Քանի որ «ՊՆ ՆՏԱԴ-ՀԲՄԾՁԲ-7/4» ծածկագրով ընթացակարգի 1-ին, 3-րդ չափաբաժինների մասով մասնակիցների առաջարկված գները գերազանցում են պատվիրատուի՝ տվյալ գնումների համար նախատեսված ֆինանսական միջոցների չափը գնահատող հանձնաժողովի կողմից, հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 38-րդ հոդվածի 1-ին կետի 1-ին ենթակետը, գների նվազեցման նպատակով 07.05.2018թ. ծանուցվել է այդ չափաբաժինների մասով հայտ ներկայացրած մասնակիցներին 14.05.2018թ բանակցությունների վարման վերաբերյալ: Սահմանված ժամկետում «ՍՖՍ Արխո» ՍՊԸ և «Էջմիածնի հաց» ԲԲԸ լիազորված ներկայացուցիչները ներկայացել են բանակցություններին և առաջարկած գները նվազեցրել համապատասխանաբար՝ 20295000 ՀՀ դրամ և 30780000 ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ՝ 0:

4. Ներկայացված գնային առաջարկների հիման վրա « ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՀԲՄԾՁԲ-7/4» ծածկագրով ընթացակարգի 1-ին և այլ տեղեր զբաղեցրած մասնակիցների որոշման մասին.

(Գ.Տերյան)

4.1 18.05.2018թ.՝ բացման նիստի ավարտի օրը «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՀԲՄԾՁԲ-7/4» ծածկագրով ընթացակարգի հանձնաժողովի որոշմամբ ներկայացված գնային առաջարկների հիման վրա ընթացակարգում ըստ չափաբաժինների՝ 1-ին չափաբաժնով 1-ին տեղ զբաղեցնող է ճանաչվել «ՍՖՍ Արխո» ՍՊԸ-ն, 2-րդ չափաբաժնով՝ «ԱՆՆԱ ԴԻԱՆԱ» ՍՊԸ, 3-րդ չափաբաժնով՝ «Էջմիածնի հաց» ԲԲԸ:

4.2 Հանձնաժողովը որոշեց հրապարակել հատուկ նիստի արդյունքները և առաջին տեղ զբաղեցրած մասնակիցներին առաջարկել ներկայացնելու «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՀԲՄԾՁԲ-7/4» ծածկագրով ընթացակարգի հրավերով նախատեսված որակավորման չափանիշներին իրենց համապատասխանությունը հավաստող փաստաթղթերը:

4.3 Հանձնաժողովը որոշեց Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե հարցում ներկայացնել առաջին տեղ զբաղեցրած մասնակիցների՝ Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի նկատմամբ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ժամկետանց հարկային պարտավորությունների, ինչպես նաև ընթացակարգի հրավերի «Ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշին վերաբերող պարբերությամբ նախատեսված որակավորման պահանջի առկայության վերաբերյալ:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ՝ 0:

5. Տեղեկություններ՝ հայտի վերաբերյալ հարցումների և պատասխանների մասին

(Գ.Տերյան)

5.1 Մասնակիցների կողմից հայտերի վերաբերյալ հարցումներ չեն կատարվել

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ՝ 0:

6. Հանձնաժողովի հաջորդ նիստի անկացման օրը, ժամը և վայրը որոշելու մասին.

(Գ.Տերյան)

« ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՀԲՄԾՁԲ-7/4» ծածկագրով ընթացակարգի նիստը հրավիրել 1-ին տեղ զբաղեցրած մասնակիցների կողմից հրավերով նախատեսված որակավորման փաստաթղթերին համապատասխանությունը հավաստող փաստաթղթերը հանձնաժողովի կողմից ամփոփման վերջնաժամկետի օրվան հաջորդող աշխատանքային օրը ժամը 11^{00}-ին, ՀՀ ՊՆ նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտի ԳՓՁ վարչության նիստերի դահլիճում:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ՝ 0:

Գնահատող	Վ. Գասպարյան
Գնահատող	Ա. Մարգարյան
Գնահատող	Տ. Հարոյան
Գնահատող	Ս. Նիկոլյան
Գնահատող	Ա. Մաղաքյան
Գնումները համակարգող՝	Գ. Տերյան